

“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse :

Rédaction du “Droschak”

GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ

(Զ Ա Ի Է Ն)

1873 — 1897

Տրապիզոն ծնած, հո՛ւ մեծցած ու կրթւած, Տրապիզոնի դաշնակցական կազմակերպութեան մէջ զործի կոչւած եւ զործի մղւած՝ անոր պատմութեան մէջ ո՛չ աննշան տեղ մը պիտի պահէ այդ մաքուր հոգիին, որ իր եղբրական վախճանով արժանի զաւակը ցուցուց ինքզինք իր Դպրոցին աւանդութիւններուն . . .

Անոնք, որ զինքը մօտէն չէին ճանչնար, դժւար գուշակէին իր անուշ նայալիքին տակ դէմքին պատանեկան խաղաղ հանդարտութեան ներքեւ, որուն հրապոյր կուտար անմեղունակ ժպիտ մը, — դժւար գուշակէին, կ'ըսեմ, այդ արտաքինին տակ յեղափոխական բուն հաւատքով ապրող հոգի մը, որուն սկզբները շատ վեր կրնային ձգտիլ, շատ վեր, մինչեւ հերոսութեան ինքնամոռացումին հասնիլ:

* *

Դեռ դպրոցական սեղաններուն վրայ՝ տղայական բայց արտասովոր դէպք մը չուշացաւ երեւան հանելու իր մէջ խորին զգացումներու ընդունակ եւ յափշտակող հոգի մը:

1889-ին Տրապիզոնի մէջ դպրոցական պատանիներու խումբ մը կազմւած էր «Հայաստանի ազատութեան» օգնելու նպատակով: Պատանեկան հաճոյքներէ զրկելով, շարաթական 10-20 փարա կը նետէին գանձանակը, եւ արդէն հաւաքած էին 60 դահեկանի գումար մը, երբ դէպք մը տալիս ու վրայ ընելու եկաւ պզտիկ հայրենասէրներու զգաուն հոգիները:

Ընկերներէն մէկը լուր բերաւ օր մը թէ Սասունը մեծ պատրաստութեան մէջ է, կամաւոր զինւորներ արդէն հաւաքւելու վրայ են այդ լեռներուն վրայ եւ գարնան սկսելու է ապստամբութիւնը:

Դեկտեմբերի ցուրտ օրերէն մէկն էր. մեր տաք-զըլուի պատանիներու սիրտերը թունդ ելան. երազներ

պիտի կատարէր վերջապէս. իսկ իրենք, անմասն մնային այդ շարժումէն. . . Կարելի բան չէր Ամէն մէկը կ'ուզէր ժամ առաջ Սասուն վաղել. վերջապէս 3 հոգի առաջ անցան. անոնցմէ մէկը Զաւէնն էր. կը զաննէ սալապան մը, որուն հետ պայման կը կապեն մինչեւ Կարին հասցնել զիրենք: Տենդային անհամբերութեամբ սպասած ժամը կը մօտենայ. ի՜նչ սուրբ ուրախութիւն այդ մատաղ սիրտերուն մէջ. Հայաստանը պիտի տեսնէին վերջապէս, անոր օդը պիտի ծծէին, անոր լեռներուն վրայ ձեռք պիտի մեկնէին արի սասունցիներուն. . . Ընկերները նախանձի արցունքով ճամբայ կը դնեն մեր երեք փոքրիկ հերոսները, որոնց, չմոռնանք ըսել, ամբողջ սպառազինութիւնը կը կազմէր ժանդարմ ռէվօլվէր մը եւ քոստ դանակ մը:

Մինչ մէկը միւռէն աւելի փայլուն երազներ մոռցնել կուտան իրականութիւնը, մութը վրայ կը հասնի, այն ինչ տակաւին մէկ ժամ կայ մինչեւ «Ես իրօղլու» օթեւանը: Ճամբան ցեխոտ է, սայլը առաջ չ'երթար. իսկ սայլապանը կըստիպէ մինչեւ օթեւանը ոտքով քալել:

Զինախառն անձրեւին տակ, նուրբ կօշիկներ միայն ոտքերին, ցեխին մէջ խրւելով, ելլալով՝ մինչեւ ոսկորներնուն ծուծը պաղ առած, վերջապէս խանր կը հասնին:

Այդ երեքին մէջ համեմատաբար աւելի տէր-տիրական ունեցող Զաւէնն էր. ծնողք ու ազգական տղուն բացակայութենէն մտատանջ եղած՝ ոտքի կ'ել-

լան, կ'իմանան եղածը եւ կը դիմեն կառավարութեան տղաքը ետ դարձնելու: Հետեւեալ օրը ոստիկաններու ձեռքով ետ կը բերին այդ «ճիւղները» եւ հարցաքննութեան կենթարկին: Սանասարեան վարժարան երթալ պատրասկելով՝ տղաքը կ'արդարանան եւ ազատ կ'արձակին:

Այդ երեքիսկան դէպքը, ինքնին չնչին, անհետեւանք չ'անցնիր սակայն Բերնէ բերան կը տարածւի, կը խօսի ժողովրդին մէջ: Տիրացու խաւարամիտներ կը ծաղրեն այդ երեքը՝ քոստ դանակն ու ժանդարմ ատրճանակը մատի փաթթան չ'իյնելով: Իսկ իրենց հասակակիցներու

ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ



և Երևանի քաղաքում շրջանին մէջ ցնցում առաջ կը բերէ, և շատեր կը նախանձին անոնց այդպէս բամբաւելուն ու ծաղրանքին:

Ծնողքն ու ազգականները այդ դէպքէն ետք աւելի խիստ հսկողութիւն մը գործ կը դնեն Ջաւէնի վրայ և իրենց ազդեցութեան շրջանակին մէջ կը ջանան պահել զինքը, բայց իզո՞ւր:

Ազգային վարժարանը, ուր կը յաճախէր Ջաւէնը, իր կոչման բարձրութեան վրայ էր այն ատեն. առողջ կրթութիւն մը՝ ազգային-ժողովրդական ոգիով ներշնչւած, մատաղ սերունդը կը պատրաստէր կեանքի կրօնին... Անյապ հետաքրքրութիւն մը տիրած էր աշակերտներու մէջ. Ջաւէնն ու իր ընկերները ո՛չ միայն խնդիր պէս վրայ կ'իյնային ամէն գրքոյկի, ուր կը տեսնէին Վան, Մուշ, Կարին կամ Հայաստան բառերը, այլ սկսած էին լրջօրէն շահագրգռել արդէն ըսկաւած յեղափոխական շարժումով...

Այդ ատենները տեղի ունեցած նշանաւոր անցքերը վերջնական դրոշմը կը դնեն իր մատաղ հոգիին վրայ. Կարնոյ դէպքը, Գում-Գարուի ցոյցը, Տրապիզոնի մէջ կարգ մը գործիչներու, վարժապետներու աքսորը, փախուստը, բանտարկութիւնը — կը գծեն իր ճամբան...

Մինակ չէր ինքը. ամբողջ սերունդ մը պատրաստւած կար, և այդ երազոտ հոգիները կը գտնեն իրար, իրենց կեանքը հիմա կ'անցնի ապագայի, լուսաւոր ապագայի պատրաստութեան երազներով ու ճիգերով. ամէն մէկը իր բամբինը կ'ուզէ ունենալ այդ հոյակապ գործին մէջ. մէկը իրր երկրագործ կ'ուզէ մօտենալ զիւղացիին քով և բարձրացնել զան, երկրորդը՝ իրր ուսուցիչ, միւսը՝ իրր ճարտարապետ կամ բժիշկ, ամէն մէկը կ'ուզէ օգտակար անդամ մը հանդիսանալ արթնացող հասարակութեան...

Ջաւէնը թերեւս յաջողէր Եւրօպա ալ անցնիլ իր ուսումը կատարելագործելու, բայց ազետալի հարւածներ առմիշտ կը ջանալան ամէն յոյս, իտէալ, ծրագիր մօտաւոր ապագայի... և Ջաւէնը կը մնայ Տրապիզոն:

Բայց այդ միջոցին պարապ չի կենար. իր զիւրազայ և կարեկցոտ սիրտը հանդիսատես միայն չէր կարող մնալ տիրող թշուառութեան և միայն «ա՛խ» երով մանկիլ Դպրոցի սեմը թողած առաջին օրէն արդէն կը մտնէ գաշակեցութեան տեղական խումբերուն մէջ. Ընկերները կը գնահատեն իր ընդունակութիւններն ու ետանդը և 94-ի զարնան տեղական կօմիտէի մասնական վերակազմութեան ատեն՝ Ջաւէնը իր խումբի երկու ընկերներու հետ կօմիտէին անդամակցութեան կը հրաւիրեն: Այն օրէն կօմիտէի քարտուղարութեան պաշտօնը կը յանձնի իրեն, որ կը վարէ խղճատութեամբ, մինչեւ քաղաքէն հեռանալը:

Վրայ կը հասնի Բահրի փաշայի վրայ կատարւած տէօրը և 1895 սեպտ. 26-ի վատաբար գործադրւած ջարդը. հազիւ մահէն կը պրծի, բայց կը բանտարկուի 20 օր կը մնայ հոն. բայց մէկու մը մտքէն չ'անցնիր կասկածիլ այդ երիտասարդին վրայ, որուն դէմքը այնքա՛ն միամիտ ու անմեղ կը ցուցնէր զինքը: Մօրուքի, քթի, բերնի, արտաքին ձևերու քննութենէ և խելկատակ հարցումներէ մը ետք, ազատ կը թողուն զինքը... ազատ ամայացած քաղաքին մէջ:

Ի՛նչ նեղ օրեր էին...

Ամէն բան խորտակւած, փճացած. ընկերներէն ու մանք նահատակւած, ոմանք մատնւած. դրամական անձկութիւնը սոսկալի... Դրամ, դրամ պէտք էր գէթ ժամանակաւոր գոհացում մը տալու համար գոյութիւն ունեցող պէտքերուն... Եւ Ջաւէնը կ'աճապարէ արտասանման...

Թէ կոտորածէն ետքը, ինչպէս և առաջ, ինչ ըրաւ Ջաւէն, հո՛ս տեղը չէ կանգ առնել. կը բաւէ ըսել որ իր բովանդակ ուժերը նւիրած էր գործին և կ'աշխատէր միջիւնի պէս:

96-ի յուլիսին դարձեալ կ'անցնի իր բնիկ քաղաքը, ուղակցելու անսովոր Եղիպտացիին, տեղական գործի մը կարգադրութեան համար:

Քիչ ետք օգոստոս 14-ն է... Տրապիզոնի բնակիչները Պօլսի ջարդէն ահաբեկ՝ երկրորդ գաղթը կը սկսին. Ջաւէնի ծնողքը նոյնպէս սարսափահար՝ գերծ չի մընար այդ հոտանքէն և կը հարկադրէ Ջաւէնն ալ միապէս հեռանալ քաղաքէն... Այդ հեռացումը տեղի կուտայ ընկերական ծանր քննադատութեան Ջաւէն խորապէս կը զգայ իր սխալը, և թօթելով իրմէն ծնողական կապերը, որոնք պատճառ եղած էին իր այդ քայլին, կը նետուի գործի մէջ, այս անգամ... ալ ետ չդառնալու անդրաւելի որոշումով...

Քանի մը ամիս ետք կ'անցնի Պօլս, ուր կը սկսի ցոյց տալ եռանդուն գործունէութիւն մը:

1 օգոստոս իր վերջին նամակին մէջ հանդարտ և ուրախ ոճով մը կը գրէ. «Հարսնիքի շքեղութեան համար բան չէ խնայւած...» Այդ միջոցին տեղի կ'ունենայ իմանասօրի կոիւր և Պօլսն ալ արձագանգ կուտայ այդ հոյակապ գործին եռեակ ուղեւորութեամբ: Ջաւէնը, որ քանի մը ընկերներու հետ սարսափի գործին շարունակութիւնն ապահովելու էր, մասնութեան մը շնորհիւ օգոստ. 12-ին, երեքշաբթի առտու մը, ժամը 9-ին կը պաշարուի իր տան մէջ:

«Անճատութիւն եղիր» — ինչ ատրճանակի գնդակներով կը պատասխանէ, և վերջին գնդակն ալ իր ճակտին կ'ուղղէ, լաւագոյն համարելով ազատ մեռնիլ գէնքը ձեռքին, քան ինչալ Մարդասպանին զիշատիչ ճիրաններուն մէջ...

* * *

«... Թո՛ղ... ամէն հայ իր օգնութեան բաժինը հատուցանէ իր ազգին՝ կա՛մ կեանքով, կա՛մ խօսքով կա՛մ դրամով...» կը գրէր Ջաւէնը գրեթէ ճիշդ երկու տարի առաջ իր պաշտելի Սասունի հերոսական պաշտպանութեան առաջին տարեդարձին. (Ակնարկ մը, «Դրօշակ» № 11, 1895):

Ջաւէնը իր խօսքին տէրը մնաց. իր պարաքը իր կեանքովը վճարեց անվրդով պաղարկւումով մը...

Թո՛ղ անճաղողութեան օրինակը խթան մը ըլլայ ընկերներուդ, որոնց բոլորքած սիրտերը գիտակցական ահարկու վրէժը միայն պիտի կրնայ մխիթարել. Եւ ծաղիկ մարմնէդ ժայթքած արիւնդ ալ թո՛ղ կրթայ խարկելու անսիրտ, գձուձ հայերու սեւ ճակատը, սերունդներու նախատինքն ու անէճքը հրաւիրելով անոնց վրայ...

Դ Ե Պ Ք Ե Ր Ը Թ Ո Ղ Խ Օ Ս Ի Ն

Մեր հասարակութեան մեծագոյն մասը, որ դիւթական գաւազանով մը մէկ րօպէի մէջ կերպարանափոխ կ'ուզէ տեսնել Հայաստանը, եթէ ոչ անտարբեր, գէթ անոր մօտիկ հետաքրքրութիւն մը ունեցած է, մերթ տարակոյսի ժպիտով մը, ամէն անգամ երբ յեղափոխական թերթին մէջ կարդացած է բուռ մը ֆէդայիներու հերոսական դիմադրութիւնը, հայրենիքի սյս ու այն կէտին վրայ:

Այդ ընդհարումներու մասին յաճախ չէր գրուի, որովհետեւ պաշտպանողական տակտիկը հարկադրած էր անյայտութեան մէջ գործելու: Ֆէդայական գործունէութիւնը երեք մերձաւոր նպատակ ունէր մինչև վերջերս. զէնք փոխադրել, շարժուն դպրոց մը ըլլալ ապագայ զինուորներու և, անխուսափելի հարկին մէջ միայն, թըշնամիին դէմ ելլալ՝ երբ գիւղացիին կեանքին կամ ինչքին վտանգ կը սպառնար:

Հասարակութիւնը որ ոչ միջոց ունի քայլ առ քայլ հետեւելու ֆէդայական խումբերու գաղտնի գործունէութեան և ոչ ալ դիւրութիւն այդ պատահական կարծած երևոյթներու տակ թաքուն չարաչար աշխատանքը հաստատելու և գնահատելու — շուտով կը մոռնար այդ դէպքերը, մանաւանդ որ ատոնց ինկոյն չէր հետեւէր Հայաստանի ազատութիւնը... Բայց միթէ լուրջ դիտող մը պիտի դժարէր բացատրութիւն մը գտնալ եթէ ինկատ առնէր այդ խումբերու սպառնալիչութիւնը, անձնիրութիւնը, ոչ-աւազակային հանգամանքը, մանաւանդ եթէ չմոռնար անոնց մատուցած անգնահատելի օգնութիւնը ժամէ ժամ մահ և աւեր սպառնացող գիւղերուն...

Եթէ հասարակութիւնն իր միտքը յոգնեցնելէ կըզգուշանար ֆէդայական գործունէութեան նպատակին խելամուտ ըլլալու, միւս կողմէն յեղափոխական թերթն ալ չէր կարող այդ շարժումին ամբողջ յատկագիծը պարզել: Մեր թերահաւատ Թովմասները համոզելու համար ձեռք բերած արդիւնքը անոնց մատներուն զըպցնելու էր. բայց միթէ հնար էր հրապարակել կամ մասնաւորներու հաղորդել այդ արդիւնքը պատկերացնող ընդհանուր գծերն իսկ: 25-ը որ այդ ընդհանրացումները որոշ ուղղութիւն մը պիտի թելադրէին թիւրք կառավարութեան՝ իր խուզարկութիւններու և հարցափորձերու ատեն, և գործը իր սաղմին մէջ խեղդէին:

Հակառակ, սակայն, բոլոր տարակոյսներուն և չկամութիւններուն ֆէդայական գործունէութիւնը — որ հանգամանքներու ծնունդն էր — շարունակեց իր ճամբան, զարգացաւ և դեռ մօտիկ օր մը, յուլիս 25-ին, իր նոր հանգրուանը մատնանիշ ըրաւ մեծագործ գործով մը:

Խանասորի կուով ֆէդայական գործունէութիւնը կը մտնէ իր երկրորդ՝ յարձակողական շրջանը:

* * *

Այդ փառաւոր գործը իր ամբողջ ընթացքով և իր հետեւեցող ամէնէն պերճախօս արդարացումը կուգայ բերելու ֆէդայական գործունէութեան հետապնդած նըպատակներուն, ուստի և մենք կանգ կ'առնենք քանի մը կէտերուն վրայ՝ լուսաբանութիւններու համար օտարներու վկայութեանը միայն դիմելով:

Ֆէդայական այժմու գործունէութեան գլխաւոր նըպատակն էր տոկուն, կուսկու մէջ ճարպիկ, թշնամի կրակին առջև աննկուն, կարգապահ զինուորներ պատրաստել հայաստանցիէն — այն տարրը, որմէ պիտի բաղկանան ապագայ բանակները:

Խանասորի բանակը այդ պահանջներուն բարձրութեան վրայ կեցած էր:

Մէկդի թողնելով կարգապահութիւնը, որու մասին միաձայն կը վկայեն անգլիացի, գերմանացի և ռուս թղթակիցները, յիշենք «Դէյլի Նիւզ»-ի թղթակցին հետեւեալ գնահատութիւնը հայ զօրագնդին ռազմական տակտի մասին. «Ինչպէս քիւրդերը կը ջանային անընդհատ կրակ ընել հայերը կամաց կամաց կ'արձակէին, լաւ նշան առնելէ ետք և անվրէպ պարագային միայն բլթակը կը քաշէին»:

Temps-ի Պօլսի թղթակիցը երեք ռուս սպաներու հրամանատարութեան ներքեւ կատարած կ'ենթադրէ արշաւանքը, ուրիշ կերպ բացատրել չկարենալով բանակի կազմակերպութիւնը, կռիւը և կանոնաւոր նահանջը:

Մօլթէի հայրենակից մը, գերմանացի Հանս Ֆիշերը կուգայ յայտարարելու թէ «ըօրքը մեծ մասով բաղկացած էր բազում դժնդակ փորձերէ անցած հասակաւոր մարդերէ»: Բայց աւելին կայ. Ֆիշերը չի վարանիր հայ զօրագնդը բաղդատելու գերման բանակին հետ. «Արշաւանքը կը կատարէր այն կարգ ու կանոնով, ինչպէս պրուսական զօրքի մէջ. ես անձամբ տեսայ ատ»:

Այդ գնահատումները կ'ուրախացնեն մեր սիրտը, բայց չենք խորհիր թէ ի՞նչպէս և ո՞ւր պատրաստեցան այդ զինուորները: Ֆէդայական կռիւներու մէջ եփուած ու միւսած, անքնութեան, քաղցի, ծարաւի, ձիւնի և անձրևի տակ քաշելու վարժ, մահը հարիւր անգամ աչքովն տեսած ֆէդայիներն էին Խանասորի յաղթական բանակը կազմողները:

Վսիւր այն բաներէն մէկն է որ գրքով ու քարոզներով չի սորվուիր, և երկար վարժութիւն կը պահանջէ: Ի՞նչպէս, եթէ ոչ ֆէդայական խումբերու շնորհիւ պիտի պատրաստենք մեր ժողովուրդը ինքնապաշտպանութեան և ապագայ կռիւներու, այն երկրին մէջ, ուր մարմնամարդ ընելը դաւ մը կը նկատուի և դանակ մը ունենալը՝ ոճիր:

Ինչո՞ւ — երբ մենք կարեկցում ժպիտով մը կը յիշենք 'նապօլէօն Գ.-ը, որ իր անվարժ բանակին գլուխն անցած Սէդան կ'երթար Մօլթբէի գունդերուն հետ չափ-ւելու, կամ չենք զարմանար երբ կ'իմանանք Քիաօ-2է-ուի չինական բերդապահ զօրքին փախուստը եռապատիկ նւազ գերման զինուորներուն առջև — ինչո՞ւ կը մոռնանք որ ատկէ աւելի վատթար դրութեան մէջ է և պիտի գտնուի հայը, եթէ կռիւը կուելով չսորվի:

Թող թիւրք զինուորը շարունակէ կրթելի Մօլթբէի աշակերտներու ձեռքին տակ, թող քիւրդը համարիտէ հեծելազօր դառնայ — իսկ դարերով անոնց սարսափին տակ ճնշւած հայը, որ միայն գերանդին բռնել քիտէ, յուսայ օր մը, առանց գործնական պատրաստութեան, ոչ միայն կուելու հարկաւորապատիկ շատ, եւրօպական սիստէմով մարզւած ու զինւած բանակներու դէմ, այլ և յաղթելու, այլ և ստիպելու սուլթանն ու Եւրօպան Հայաստանի անկախութիւնը ճանչնալ:

Իսկ մենք անդառնալի կերպով անցած կը կարծէինք հրաշքի դարերը...

Ֆէդայական խումբերը նպատակ ունին նաև ի հարկին պաշտպանել հայ գիւղացին և իր ազդած սարսափով չափաւորել քիւրդին կամ թիւրքին վայրագութիւնը:

Երկար պիտի ըլլար հոս կանգ առնել և յիշատակել պաշտպանութեան բոլոր այդ տեսակ դէպքերը: "Դրօշակ"-ը արձանագրած է այդ զինեալ ընդհարումները, ամէն անգամ, երբ կառավարութեան համար ալ գաղտնիք մնացած չէ անոնց լոկ ֆէդայական հանգամանքն ունենալը: Իր տեսակին մէջ անմոռանալի կը մնան 95-ի և 96-ի ջարդերու ատեն Մեծ-Հայքի բազմաթիւ կէտերու վրայ տեղի ունեցած հերոսական պաշտպանութեան դէպքերը, որոնք եթէ անկարող եղան — խումբերու սակաւութեան պատճառով — առջևն առնել ջարդերուն, բայց գէթ զգալի կերպով արգելք եղան անոնց մեծ համեմատութիւններ առնելուն:

Հայ գիւղացին ու քիւրդը մոռցած չեն ատոնք...

Քիւրդը դեռ այդ կռիւներուն ատեն զգաց ֆէդայիին քերականութիւնը և իր միամիտ պարզութեան մէջ ծանօթ առածն ստեղծեց: Բայց այդ սարսափը իր գա-գաթնակէտին կը հասնի Խանասորի պարտութենէն ետք:

Ռուս թղթակից մը ուրիշ բառ չի գտներ որակելու քիւրդին սարսափը ֆէդայիին հանդէպ՝ եթէ ոչ "անբուժելի" անւանելով զան:

Իսկ Սալմաստի կաթօղիկ-քաղդէական առաքելութեան երէցը՝ Դ. Սալօմօն, Հայր Շարմըթանին ուղղած իր 15 սեպտեմբեր նամակին մէջ կուգայ վերջին խօսքն ըսելու այդ սարսափի աստիճանին ու կարեւորութեանը մասին. թէ քիւրդերը սոսկալի կերպով կը վախնան ֆէդայիէն և եթէ այդ սարսափը չըլլար, ամէն օր պիտի իմացէր գիւղի մը կոտորածը քիւրդերու ձեռքով: Բայց քիւրդը ուրիշ բան մըն ալ իմացաւ հայու

մասին. քիւրդ աղջիկները վերջին կուր առթիւ յօրի-րինած իրենց երգերուն մէջ, ֆէդայիին վեհանձնութիւնը քաջութեանը համահաւասար սկսած են դուատել: Իրենց համար նորութիւն մըն էր որ թշնամին խնայէր կիներու և մանուկներու կեանքին ու պատւին: Եւ քիւրդը սկսաւ համոզուիլ որ հայը իր տարրային թշնամին չէ և թէ Խանասորի կռիւը ցեղական թշնամութեան մը հետեանք չէր, այլ մազդիկցոց տուած պատիժ մը որոշ չարագործութիւններու համար:

Քիւրդը մարդկութեան երեսաներէն է. մատը կրակէն չպիտի քաշէ, մինչև չսյրւի. այն օրը պիտի զսպւի, երբ յարգանք զգայ հայուն բարոյական և ֆիզիքական գե-րազանցութեանը: Բայց այդ յարգանքը "Հայաստանը հային" դպրոցականի բացառանջութիւններով և համ-բերութեան վատ յորդորներով չէ որ պիտի գայ վա-նելու ֆլահի կամ վախկոտ հայու մասին արհամարհանքը:

"Ծեծէ՛ քիւրդը և բարեկամդ կը դառնայ" առածը սխալ չէր: Խանասորի աղետալի պարտութենէն ետքն է որ քիւրդ ցեղերն սկսած են հաշտութեան մասին խորհիլ...

Ահա Խանասորի կռիւն առաջին արդիւնքը:

* * *

Ա՛լ ժամանակ է հասկնալու որ առանց ֆէդայական գործունէութեան, անհնար է օսմանեան Հայաստանի արդի կացութեան մէջ ժողովրդին հոգին լքումէ ա-զատ պահել, պաշտպանել անոր կեանքն ու ինչքը հը-նաւորութեան սահմանին մէջ և... ապագայի համար պատրաստուիլ...

Ա՛լ ժամանակ է սթափ աչքով նայելու մեր շուրջը և գտնելու բարեկամները, որոնք այդ անունին տակ ա-ւելի վտանգաւոր են քան Մարդասպանն ու քիւրդը:

Հեռու այն անորակելի անբարոյականները, որոնք չհաւատալով հանդերձ իրենց քարոզած սպառազէն և ապստամբ Հայաստանին, կը դատափետեն ֆէդայական շարժումները, երազներով կը սնուցանեն ժողովուրդը, անոր հոգին մեռցնելու կը ճգնին, այդ մութին ու ա-ւերին մէջ իրենց կեանքը երկարելու համար...

Հեռու յեղափոխութեան սուրբ անունը պատմուճա-նած, ժողովրդին առջև սիգացողները, որոնք առակի աղէսին պէս "Խաւ Է" կը պոռան ամէն անգամ երբ դուռններին խաղողին չի հասնիր...

Հեռու այն տկարամիտները, որոնք անընդունակ լուրջ և յարատեւ ճիգերու, իրենց յորդորներով կը յիշե-ցնեն այն խիւղիկ, որ սենեակին մէջ լողալու վարժու-թիւններ ընելէ ետք՝ կ'երթայ կը նետուի Ատլանդեանը՝ Ամերիկան գտնալու...

Հեռու բոլոր այդ բարեկամները...

Բայց հայու արիւնով ողողած հայրենիքին մէջ ապ-րող հայը, որ ապագային եւրազներէն աւելի ներկային ապահովութեանը կը կարօտի, որ արիւնի օրերուն մէջ

ճանչցաւ իր միակ բարեկամը՝ Ֆէդային, պիտի հետեւի անոր, պիտի սիրէ այդ զինւած և արի ձեռքը և յարգանքով պիտի խոնարհէ իր գլուխը Ֆէդայի հերոսներու յիշատակին առջև, որոնք իրենց քոյրերու և եղբայրներու կեանքն ու պատիւը պաշտպանելու ատեն ինկան պարտքի ու կռւի դաշտին վրայ, այն վեհ մը տաժմունքով որ 1870-ի պարտւած Ֆրանսայի հերոսներու համար յատկանշեց բանաստեղծը.

En avant! Tant pis pour qui tombe!
La mort n'est rien. Vive la tombe!
Quand le pays en sort vivant.
En avant! 1).

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

10/22 սեպտ. 97

Անորոշ և տարտամ է կացութիւնը: Տաճիկ կառավարութիւնը մեր վերջին խօսքը լսելէ ետքը՝ չհամարձակեցաւ իր սպառնալիքները գործադրել. միայն՝ աջալուրջ կը հետազօտէ մեր քայլերը, մեր շարժումները: Մենք ալ աւելի խիստ հետամուտ եղած ենք իր խորհուրդներուն. իր ամէն մէկ կատարելիք գործը ժամանակով առաջ մենք կը հասկնանք ու ապա ինքը կըսկսի: Վերջին օրերս ալ միմեծ է կառավարութեան վրայ. մեր հետքը կորսնցուցած է, այդ պատճառով շատ կը նեղւի: Ձեռքան խուզարկութիւն մը սկսաւ քանի օր առաջ — ինչպէս հաղորդած էինք մեր նախորդ նամակով — և քանի մը ժաման մէջ խուզարկեց Այգեստանի 10-15 տունները, օր ցերեկով: Պարսկ և ապարդին անցաւ ատ. քաղաքամէջը խուզարկեց և յաջողեցաւ միայն երկտող գրութիւն մը ձեռք բերել, որուն վրայ հիմնւած ձերբակալեց քանի մը մարդիկ. չորս հոգի ալ, անգէն, որոնք կ'ուզէին անցնիլ ուրիշ կողմ, նաւի մէջէն բռնեց, հանեց. ասոնցմէ մէկը յաջողեցաւ փախչելով ազատել: Սահմանագլուխն ալ, Սարսի մօտէն, բռնեց վեց հոգի, և՛, երկուսը ուրիշ քանիներու հետ սպաննելով, չորսը քաղաք բերել տուաւ: Իսկ այդ ամէն ձերբակալւածները անձար, խեղճուկրակ մարդիկ էին:

Բնական է որ այս բոլորը ոչինչ գոհացում չտուաւ տաճիկ կառավարութեան: Դաշնակցական առիւծներու սարսափը հանգիստ չի թողուր գազան Համիտն ու իր բոլոր արբանեակները:

Բայց ահա քաղաքէն երկու ժամ հեռու, Բերդակ գիւղի մօտ որոտաց ու գողաց դաշնակցական Ֆէդայի անձուխ հրացանը. քիւրդը գետին գլորեցցաւ, X-ի խումբը թռաւ ու անցաւ: Կառավարութիւնը շտապեց, 100-ի մօտ ձիաւոր զօրք հասցուց գէպքին վայրը. բայց ինչ... այդ հռչակ հանող ձիաւորները իրենց հերոսութիւնը գործ դրին անգէն, անմեղ խեղճ գիւղացիներու վրայ և քանի մը հոգի ձերբակալելով քաղաք

բերին, մէկ տուրակի և քանի մը պարսկ փամփուշտի հետ, որ թողած էր խումբը:

Շատ խայտառակ պատմութիւններ կան կառավարութեան, քիւրդերու և ընդհանրապէս մահմետական ժողովրդի զգացած սարսափներու մասին: Այդ սարսափի ազդեցութեան տակ տաճիկ կառավարութիւնը բոլոր եռանդով կը շարունակէ իր պատերազմական պատրաստութիւնները: Զօրքը ահագին թւով կը մնայ տակաւին սահմանին վրայ, և անոնց թիւը օրէօր կ'աւելցնեն: Մէկ վաշտ ալ արաբական զօրք եկած է սահմանագլուխ: Ամէն օր գրեթէ ուրիշ քաղաքներէ պահեստի զօրքերը Վան կը թափուին և մօտ 200 սայլ (5,000-ի չափ) մաւզերեան հրացան փոխադրւած է այստեղ: Թող պատրաստի որչափ և կ'ուզէ, բայց իր սարսափը չի կրնար փարատել: Սարա գիւղի մօտի քանի մը հրացաններու ձայները շարժման մէջ դրին այնտեղի ամբողջ զօրքերը, ու թնդանթներով դուրս եկան 9-10 խեղճ մարդերու վրայ, որոնք զօրքերը տեսնելուն պէս արդէն անձնատուր եղան:

Վերջին լուրեր. — Կուսակալի փոխանորդ Ֆէրիզ Էէմսի փաշա և անգլիական հիւպատոսը ուրախութեամբ յայտարարած են ամէն տեղ, ապացոյց բերելով Բերդակի գէպքը, թէ՛ Վան գտնուող Ֆէդայիներու խմբապետը հեռացած է արդէն Վանէն և կը հաւաստեն նոյն իսկ թէ հարաւային գաւառները գացած է իր խումբով: Անգլիական հիւպատոսը ուռած, հպարտացած՝ պարծանքով կը խօսի թէ՛ իր իմաստուն (") խորհուրդներն այն աստիճան ազդեցութիւն ունեցան որ խմբապետը համոզուելով անմիջապէս թողուց հեռացաւ քաղաքէն: Իսկ Ֆէրիզ Էէմսին սկսած է իր տաճիկական սպառնալիքները. «Խմբապետը դուրս գալով միթէ պիտի ազատի իմ ձեռքէն. ահա՛ զօրքը ետեւէն հասաւ, կամ կը բռնէ, կամ կըսպաննէ»:

Եւ իրաւ, խումբ մը զօրք դուրս եկաւ քաղաքէն դէպի հարաւային գաւառները, Մոկաց աշխարհ, ո՞վ գիտէ ինչ երեւակայական յոյսերով...

Յաջողութիւն քեզ, ցնորւած Էէմսի, թող Մոկաց աշխարհի բարձրաբերձ սարերը դողան ու սարսին քու անվեհեր զինուորներուդ առջև...

Յաջողութիւն քեզ, անգլիացի հիւպատոս, ուրիշ, հպարտացիր, բայց ոչ պայթելու չափ, որպէսզի միջավայրը չապականես...

Յաջողութիւն ձեզ, կեղտոտ հարուստներ, վեղարաւոր և անվեղար դաւաճաններ, սարսափը վերցւած կ'երազէք ձեր վրայէն, ալ հանգիստ քնացէք...

Յաջողութիւն և ձեզ, անվերջ կրկնացող պառաւներ, որ անարժանաբար յեղափոխութեան սուրբ անունով կը պարծիք տակաւին. գերեզմանի դռնէն ձե՛ր փափաքն ալ ատ է...

Բայց չպիտի հասնիք ձեր սրտի փափաքին, դո՛ւք, յեղափոխութեան ու հայ ժողովրդի ռեսերիմ թշնամիներ...

Դաշնակցական սուրբ դրօշակ կը ծածանի միշտ ազատ, Բանի՛ ձեզ պէտք անմիաներ պիտի դառնան յուսմանս:

1) Յառաջ. ինչ հոգ որ իմաստներ կան. մահը ոչինչ է. կեցցէ գերեզմանը, եթէ հայրենիքը կենդանի դուրս պիտի ելլայ անկէ: Յառաջ:

ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԷՆ

1/13 օգոստոս.

Կոտորածներու ատեն, ինչպէս յայտնի է, գազանա-
բարոյ թիւրքերը բազմաթիւ շնորհալի հայ աղջիկներ
առեանգեցին. . . իրենց կանանոցները զարդարելու հա-
մար Դերջանցի հայ օրիորդ մը թրքական այդ անբան-
ցընող ծուղակն ինկած էր: Դժբախտ աղջիկը օրնի-
բուն կուլար իր մազերը փետտելով. քանի մը կտրիճ
երիտասարդներ, կանանոցի մթին պատերէն դուրս ձո-
ղոպած անոր աղերսներէն յուզելով մահը աչքը կառ-
նեն, ու քաղաք կը փախցնեն զինքը. . . Եթէ աղջիկը
գտաւ իր ազատութիւնը, անդին անոր ծնողքը անտա-
նելի տառապանքներու և հալածանքներու մատնած
են, առեանգող թիւրքերու կողմէն, որոնք անմիջական
վերադարձը կը պահանջեն անգարձ թուղթիկին: Խեղ-
ձերուն չքաշածը չմնաց. բայց բողբոջէ չեն կարող
որովհետեւ կառավարութեան ականջը քար կտրած է:

Ուրիշ հայուհի մը, Ղարաթաշ գիւղէն, առեանգելու
որոշումը կուտան թիւրքերը — գեղեցիկը հայուն խնչ
կը վայելէ — բայց ծնողքը կանուխէն իմանալով դա-
ւադրութիւնը, իրենց աղջիկը Մուլա գիւղը կը փախ-
ցընեն:

Դերջանի Խարխըն գիւղը ցարդ չորս առեանգած
հայ աղջիկներ կը պահէին. ասոնցմէ մէկը ամիս մը
առաջ կը յաջողի փախչել և հայու մը աջակցութիւ-
նով քաղաք գալ. միւս երեքը դեռ կը մնան և գուցէ
յաւիտեան ալ մնան, հակառակ աղջիկներուն օր ու
գիշեր թափած լաց ու արցունքին: Աղջիկները թուրք-
ցեր են ըսելով դուրս չեն հաներ. իսկ խեղճ ծնողքը,
գիտնալով որ իրենց աղջիկները ուրացած չեն ի-
րենց կրօնը, նորէն ահաբեկ չեն յանդգնիր պահան-
ջելու: Երկու ուրիշ օրիորդներ ալ հոս, Ճիմինի մէջ կը
պահւին բռնի: Նմանապէս այս օրերս մեր հարսները ու
աղջիկները դաշտերէն գիւղ վերադարձին, թիւրքերը
վրանին կը յարձակին և կը փորձեն անպատել: Ասոնք
որ կը գրեմ հասարակ ու սովորական բաներ են այժմ:
Թրքական կեդոտութիւնը ու վարագութիւնը ասկից
աւելի պարզ կերպով կ'որոշէ արդեօք երեան գալ:

Ոչ միայն աղջիկ կը գողնան, հապա երեխաներ ալ. . .
Թրքական «հա գ տինի» մէջ մտցնելու համար: Հին
քաղաքին մէջ բնակող թիւրք մը, քաղաքէս ֆայթում-
ձի Մարիամի չորս տարեկան մանուկը գողցած պահած
էր. թիւրքի մը իմաց տալուն վրայ, մանկան ծնողքը կ'եր-
թան ձեռքով դրածի պէս կ'առնեն իրենց զաւակը նոյն
իսկ ոստիկաններու աչքին դիմաց, որոնք լոկի կը դի-
տէին այդ հակամարդկային եղբերգութիւնը:

Չորս ծանձիկցի նորահաս երիտասարդներ, քաղքէն
գիւղ վերադարձին, պալապանցիներու ղօլի մը կը
հանգպին, որ անողորմ վարագութիւնով մը չորս ե-
րիտասարդներն ալ կտոր կտոր կ'ընէ և ձորի մը մէջ
կը նետէ անոնց անդամները: Այդ ղօլին պետէ, հա-
յերուն ուխտեալ թշնամի, հռչակաւոր Խալիլ աղան:
Աս այն գաղանն է՝ որ 95-ի աշնան դէպքի ատեն, ի-
րեն ներկայացող եօթը խնձորեկցի հայեր քահանայով
մէկտեղ, կապել տալէ ետքը, գնդակահար կըսպաննէ ու
կտրտել կուտայ: Ահա մեր վիճակը:

ԿՐՕՆԱԻՈՐ ՄԸ
ՖԷԴԱՅԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի խոռվութիւններու սկզբնաւորութենէն իվեր Սաւ-
մաստը հայրենասիրական կոմիտէի կեդրոնն է: Վրէժխնդրութեան
կողմ մը պատրաստուած էր կոտորիչ քիւրդերուն դէմ: Վրէժա-
նու գունդերը Սալմաստի մէջ պիտի կազմէին: Պարսկաստա-
նը. . . չէր կրնար արգիլել կռիւ մը որուն յատկապէս եւ
ուժերը կը գտնուէին դաւադիրներու ձեռքին մէջ աւելի թա-
քուն քան գաղտնի ոստիկանութիւնը, և որոնց մեծագոյն մա-
սը հոս չէր. անոնք պիտի գային աշխարհի չորս ծայրերէն հոս
հաւաքելու և հովի պէս մեկնելու համար: Եւ իրաւ, մենք մի-
շու անգամ չիմացանք թէ երբ և ինչպէս հայ հայրենասեր-
ները եկան ու գացին քիւրդերուն դէմ: Մենք միայն իմացանք
որ անցած օգոստոս 6-ին ընաշինջ էին ըրած քիւրդ վրասա-
կայտ մը սահմանէն 5 քիւլմէթը հեռու:

Վրասականի պետն է Շերիֆ պէյ անուն մէկը, որ հե-
րու շատ հայ սպաննած էր և չափազանց հարստացեր էր ա-
նոնց կողոպուտներով: Հայ յարձակողներուն թիւը չգիտցանք
մենք. քիւրդերն ըսին թէ 1,400-էն աւելի էին: Հայերը կը պա-
տասխանեն թէ քիւրդերը կը չափազանցեն թիւը, իրենց պար-
տութեան ամօթը թարցնելու համար. իրենք 260 հոգի էին մի-
այն: Հոս միաբան կը խօսուի թէ հայերն ալ իրենց կողմէն,
շատ կը նւազեցնեն իրենց պատերազմիկներու թիւը, իրենց
քաջութիւնը՝ աչքի զարնել տալու համար:

. Թիւրք նահանգապետը կը գրգռէր քիւրդերը փաս-
տեր հասցնելու Պարսկաստանին, և պատերազմով կըսպաննար
անոր՝ ցորչափ Սալմաստը չմաքրէր հայ հայրենասէրներու այդ
կոմիտէին: Պարսիկները իրար անցան թիւրքերը գոհացնելու
համար. բռնեցին ու բռնատակեցին՝ բոլոր այն հայերը որոնք
Սալմաստի մէջ հաստատ ընտելութիւն չունէին. օսմանեան հը-
պատակ եղածները օսմանեան իշխանութիւններուն յանձնեցան:
Հիմա կը պնդեն թէ ալ չմնաց ատոնցմէ (յեղափոխականներէ),
բայց առ կ'ըսեն առանց իրենք ալ հաւատացած ըլլալու, ո-
րովհետեւ երբ քիւրդերն ապահով ըլլան թէ Սալմաստի մէջ
ալ ընաւ չկան հայ հայրենասէրներ, այն ատեն ամէն օր պի-
տի իմանանք գիւղի մը կոտորածը, որովհետեւ անոնք այդ դե-
հայերէն անհարկին վախ ունին (car ils ont peur bleue de ces
diables d'Arménien):

Դ. ՄԱՐԿՍՅԱՆ.

Oeuvre des écoles d'Orient, N° 222

ԵՐՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

Havas-ի գործակալութեան Բէյրութից ստացած մի հեռա-
գրի համաձայն մի պաշտօնեայ այդ քաղաքից մեկնել է Մէր-
սին՝ ընկելու համար մի կարծեցեալ դաւադրութիւն: Չերքա-
կալուած են 30 հայ և մի յոյն:

Lloyd-ի գործակալը՝ Բրացցաֆօլի, աւստրիականաւ, ար-
տաքուած է՝ յեղափոխականներին գործակից լինելու պատճառով:
Աւստրիական դեսպան քարթոն Դալիշը բողբոջում է այս
դէպքի առթիւ և պահանջում է, որ Բրացցաֆօլիուն թոյլ տըր-
ւի Մէրսին վերադառնալ: Կառավարութիւնը համաձայնում է,
իսկ երբ դեսպանատան տուած տեղեկութեան հիման վրայ Բրաց-
ցաֆօլին ծանապարհում է Մէրսին, տեղական պաշտօնեա-
ները նրան ննջարկում են խտուութիւնների և թոյլ չեն տա-
լիս քաղաք մտնել:

Տաճիկ կառավարութեան երկդիմութիւնից զայրացած դես-
պանը անմիջապէս մի վերջական գրութիւն է ուղարկում
Բ. Դրան, պահանջելով, որ Մէրսինի միւթէտարիֆը և Աղա-
նայի վաւին պաշտօնանկ լինեն, ներողութիւն խնդրեն Բրաց-
ցաֆօլից, յանձնին որի անպատուած է եղել աւստրիական հը-
պատակը, պատիւ մատուցանեն աւստրիական երեք ռազմաւա-
կների քարծրացրած դրօշակներին, սպաննալով հակառակ դէպ-
քում, եթէ միշտ չհնգաքթի կէսօր իր պահանջներին բա-
ւականութիւն չարեւ, անմիջապէս ուղարկուի Մէրսին:

Բացի այդ, աւստրիական դեսպանը պահանջել է արեւել-
եան երկաթուղիների վերաբերմամբ իր դիմումների անպայման
բաւարարութիւնը:

Սուլթանը, որը վաղուց մոռացութեան էր տւել եւրոպա-
կան պետութիւնների ամենախիստ դիմումներին: Բաւականութիւն
տալու սովորութիւնը, որը լու ընդեւացել էր այս կամ այն

հարցը ձգձգել եւ վերջ ի վերջոյ մոռացութեան տալ անսպաս խոստումներ լինողով, այս կտրական քայլից սարսափահար իսկոյն հրաման է ուղարկում Բ. Դրան՝ ընդունել եւ կատարել աստորիական դեսպանի բոլոր պահանջները: Եւ դեսպանը նոյ. 18-ի գիշերը, ժամը մէկին ստանում է Բ. Դրան ծանուցումը, թէ ամէն տեսակ բաւարարութիւն կը տրւի աստորիական պահանջներին, ինչպէս Մէքսիկոյ միջադէպին, նոյնպէս եւ արեւելեան երկաթուղիներին մասին: Այնպէս որ, հարցը վերջացած կարելի է համարել եւ ամէն վտանգ անցած:

--Հազիւ խաղաղեւէ էր աստորիական խռովութիւնը, ծագեց նորը: Մի անգլիահայաստակ Խարբերդ ուղեւորելիս, ծիրակալում եւ պահում է Ուրֆայում տեղական կառավարութեան ծնողով, բոլորովին սպօրիկ կերպով: Անգլիական դեսպանի խիստ սպառնալիքի հետեւանոյ՝ ծնրակալումը ազատ է թողւած եւ կարող է իր ծանապարհը շարունակել:

--Յունաստանից ստացւած պատերազմական տուգանքը սուլթանը փառաւորապէս ծրագրել էր գործածել նաւային ոյժ կազմելու համար: Այդ նպատակով նա արդէն քանակցութիւններ էր սկսել գերմանական գործարանների հետ: Վաղուց է, որ Տաճկաստանը պատերազմական տուգանք չէր վայելել: Յունաստանին, թէեւ համեմատաբար փոքր, բայց շատ քաղցր կը լինէր, եթէ Ռուսաստանը անխիղճ կերպով չմեծամտէր եւ չպահանջէր իր անելիքը, որ մօտաւորապէս 1,300,000 լիբրա է: Ռուսաստանի նպատակը Գերմանիայի ազդեցութիւնը Տաճկաստանի վրայ կտործել է, թէ ուղղակի դրամ ստանալը, այդ դեռ որոշ չէ, միայն փաստ է. որ Տաքը հարամ է անելու սուլթանին այդ գումարը:

--Մի այդպիսի խիստ դիմում եղել էր եւ Բոլզարիայի կողմից՝ յունական պատերազմի սկզբից խոստացւած մակէդոնական բերանների համար, որի տրւելն անվերջ ձգձգում է: Բոլզարիայի ներկայացուցիչ Մարկովը Սօֆիայից ստացած հրահանգի համաձայն գիշերային ժամը 1-ին շտապում է պալատը եւ Մեծ-Վիզիրից ընդունելով խստիւ պահանջում է մինչեւ մի որոշ ժամանակ բերանների տրւելը, յայտնելով միանգամայն, որ հակառակ դէպքում Բոլզարիան իրեն անկախ կը հրատարակէ: Այս անգամ եւս խոստում տրւեց, մի քիչ յետոյ իրատէ եւս հրատարակեց 3 բերանի համար (թէեւ պահանջւած էր 5). բայց շուտով սուլթանը տեղեկանալով, որ մի ուրիշ մեծ պետութեան մօտ չկայ իստն այս գործում, ամենաանամթ կերպով յետ առաւ իր իրատէն, յայտարարելով Բոլզարիային, թէ բերանները կը տրւին յունական խաղաղութեան դաշինքը կնքելուց յետոյ միայն:

--Կրետական հարցը նորից սկսում է զբաղեցնել դիպլոմատներին: Յունական պատերազմի անաշուղտութիւնից յետոյ Գրետի ազգային ժողովը, տեսնելով, որ անկարող է միանալ մայր Յունաստանին, ստիպւած եղաւ յայտնելու եւրոպական ծովակալներին, որ կրետացիք ընդունում են ինքնավարութիւնը, միայն թէ տաճկական զօրքներ չուտով հեռացնեն կղզուց: Ծովակալները պատասխանեցին ազգային ժողովի նախագահին, թէ անկարող են վերջնական որոշ պատասխան տալ մինչեւ ընդհանուր կառավարչի հաստատուելը եւ կղզին գաւլէ:

Իբր Կրետէի ընդհանուր կառավարիչ, ինչպէս յայտնի է, առաջարկւած էր Զիցցերիայի Դաշնակցութեան նախկին նախագահ Նումա Դրոն: Բայց դրա թեկնածութիւնը չանցաւ. վերջերումս պետութիւնների մէջ ընդհանուր համաձայնութիւն էր կայացել գնդապետ Շէֆերի վերաբերմամբ. նրա թեկնածութիւնը նոյնպէս թողւած պէտք է համարել: Մի կողմից Ռուսաստանն սկսել է հակառակել պնդելով, որ Գրետէի կառավարիչը պէտք է անպատճառ յունական լինի, միւս կողմից սուլթանն է սաստիկ բողոքում, որովհետեւ Շէֆերը արտաքուստ է եղել Տաճկաստանից հայկական գործերում խառը լինելու պատճառով: Տրւում են մի քանի այլ անուններ, բայց գործը միշտ դժւարանում է նրանով, որ Տաճկաստանը պահանջում է. 1) Ընդհանուր կառավարիչը տաճկահայաստակ լինի. 2) իր զօրքները մասն կղզում. 3) Կղզու դրօշակը մնայ տաճկական: Այս առթիւ

Daily News-ին հաղորդում են հոսովից, թէ պետութիւնները այժմ մի հարց են քննում, հարկաւոր է արդեօք մի նաւային ցոյց անել Դարդանէլում՝ կամ պաշարել Պօլսը, եթէ սուլթանը շարունակի հրաժարել Գրետէին ինքնավարութիւն տալու եւ իր զօրքներ յետ քաշելուց:

Մինչ այս, մինչ այն, կրետացիք, չսպասելով Եւրոպայի հաստատելուն, պատրաստել են արդէն իրենց դրօշակը: Նա սպիտակ է, մի սեւ խաչ մէջտեղը՝ սգի նշան Յունաստանին միանալու անհրաժեշտ համար: Դրօշակալին կպած վերի անկիւնում գտնուում է մի քառակուսի կտոր, որի վրայ նկարւած է փոքրիկ դիրքով յունական դրօշակը: Այդ դրօշակը փառաւոր հանդիսով, ահագին եւ ոգեւորւած քաղմութեան ներկայութեամբ, օրհնել է Արկադի վանքում՝ նշանաւոր իր ապստամբական պատմական անցեալով:

--Հանգիստ չեն Պօլսի «երիտասարդ» թիւրքերը: Զերքա-կալւած են 10 զինւոր եւ շատ ուսանող, յեղափոխական յայտարարութիւններ տարածելու համար: Յեղափոխական գաղափարները զարհուրելի առաջադիմութիւն են անում բոլոր դեպքերում, մասնաւորապէս զինւորականներում:

--Միաժամանակ վերջացաւ «Մէշվէթէթ»-ի դատը Բէլգի-յում: Տաճկաստանի դրամայն Բէլգիան արգելեց «Մէշվէթէթ»-ի տաճիկներն հրատարակութիւնը իր երկրում: Այս առթիւ հարցա-վնդում եղաւ խորհրդարանի սօցիալիստ պատգամաւորների կողմից: Արտասանեցան փառաւոր ծառեր, իրենց հիմք ունե-նալով հայկական կոտորածները: Բայց ոչ երկրի մամուլի կա-տարեալ ազատութեան օրէնքը, ոչ չարաքաստիկ հայկական կոտորածները եւ ոչ ընդհանրութեան համագումը կառավարու-թեան անարդարութեան մէջ, ոչ մի քան չկարողացաւ դի-մանալ այն ուժի առաջ, որ կոչւում է փող: «Եթէ «Մէշվէթէթ»-ին թոյլ տրւի հրատարակել, տաճիկ կառավարութիւնը իր պատւէրն երբ չի տալ այլեւս Բէլգիային», առանց կարմրելու յայտարարեց նախարարը եւ կառավարութիւնը արդարացաւ պատգամաւորների ծայրերի ահագին մեծամաս-նութեամբ:

Journal 15 նոյեմբ. Տաճկական պատերազմական նաւերը, որոնք Անատոլիայի շուրջն են պտտում, ծնրակալեցին մի յոյն, որը փոր-ծում էր արի դուքս հանել Մէքսիկոյ մօտ գտնւած անսպաս մի կէ-տում ուղղմանը բաւական պաշար: Հայերի զրգոյթը սաստ-կանում է աւելի եւ աւելի, մանաւանդ տիրող աղքատութեան պատճառով:

Ռուսաստանի օրինակին հետեւելով, Տաճկաստանը շարունակ զօրքեր է ուղարկում Հայաստանի սահմանները: Տաճկական զինա-րանները գործում են զիշեր ցերեկ: Դարնան վերաբերմամբ նա-խատեսութիւնները շատ չարագուշակ են:

Autoric Հայաստանի դրութիւնն սպառնողական է դառնում: Ինչպէս կարելի էր նախատեսել, քրդերը նորոգում են իրենց խրժ-դժութիւնները եւ տաճիկ իշխանութիւնը իր հաւածանքները: Միայն Սիրիայում ծնրակալւած են 20 նշանաւոր հայեր, Աղանայում 30: Քրդերն իրենց կողմից յափշտակում են կոտորւած կամ զաղթած հայերի ընկալութիւնները, բոլորովին չեն քաշւում հայրենի տանը մնացած հայերին դուքս քշելու: Մշում հայերից պահանջում են, քանտարկութեան սպառնալիքի տակ, զինւորական հարկը, որ յե-տաձգւած էր:

Ինչպէս եւ նախորդ դէպքերի դիմաց Եւրոպան անշարժ է մնում: Իր վախկոտ ծայրը լսելի անելու համար նա կըսպասի, մինչեւ որ այլեւս քան չմայ, ամէն ինչ վերջանայ եւ միայն մոռեալները մը-նայ թաղելու:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Հ. Յ. Դաշնակցութեան կեդր. սնդոհկն ստացած է. Ոսկանապատից 1,600 ռուբլի, Ակոռից 82 ռ., Սկսնակ-խմբից 13 ռ., * * * * 184 ռ., Հաջ. ք.-ից 150 ռ., Գետ. շ.-ից 50 ռ., Միխ. լ.-ից 42 ռ. 50 կոպէկ, Խար. ք.-ից 174 ռ., Քարաժայռից 350 ռ., Պետ. բ.-ից 400 ռ., Նխ. ք.-ից 100 ռ.:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ մէջ ստացւած է.

Պ. բաղարի Ամպ խուժրէն՝ Մօրօ և Անյայտ 5 ֆրանք, Ա. Պ. 5 ֆր., Մ. Օ. 2 ֆր., Ե. Մ. Դ. 2 ֆր., Ա. Մ. Յ. 2 ֆր., Ե. Յովսէփեան 2 ֆր., Ամպ 1 ֆր.: Համա-գումար 19 ֆր.:

Բ. ոմ 10 ֆրանք, Արմաւիր 9 ֆր., Արտաւազդ 2 ֆր., Սէր 2 ֆր., Մուրադ 2 ֆր., Թաթուլ 1 ֆր.: Հա-մագումար 26 ֆր.:

Նէօշաթէլ՝ Մարգարէն 5 ֆրանք: Յիւրիխ՝ Խոռիկեան 5 ֆր.: Քոլմթրի՝ Անձնէր Խ. 14 չելլինկ:

Ս.-Յ.-ի Կոմիտէն ստացած է.

Տիկին Մ. Հ.-ից 100 ղուան, Մ. գիւղի Պ. 2.-ից 190 ղու., Հ. ընկերութիւնից 2,550 ղու., Ուսուցիչ Մ.-ից 5 ղու., Ս. Հ.-ից 100 հատ բերդանի փամփուշտ, Բ.-ից 2 հատ դաշն, Ս.-ից մի ռէվօլվեր, Մակուից X-ից մի կարի մե-քենայ, Թղթախաղերից վերցրած տուգանք 48 ղու., Փ.

գիւղացիներին 180 ղա. արժողութեամբ ցորեն, Բ. ից 90 ղա. ի ցորեն, Մ. ից 210 ղա. ի ցորեն, Ս. և Բ. գիւղացիներին երեք եղան կաշի (տրեխացու), Տ. և Բ. ից 50 ղոյգ բրդէ գուլպայ, Պ. Փ. ից մի ձի և երկու ոչխար, Բ. և Ե. ի մի քանի վաճառականներին 2,000 ղա. ի արժողութեամբ չլեղէն, շալիղէն և վանազան կտորներ, Հ. 2. և Մ. ից երեք մաուզէր հրացան:

Վրէժ ք. ից՝ Միկրօր խմբի ձեռնարկած վիճակախաղից մինչև այժմ ստացւած է 400 ղա., Բացիլ խմբից 60 ղա., Հանթ խմբից 300 մօսինի փամփուշտ:

ՏԱՊԱՐ քղ. ի Կեդր Կովտէն ստացած է.

Սեպ. ի ամսավճարները՝ Մամիկոնեան շրջ. 44 դահեկան, Սյաք շրջ. 20 դհ., Հանթ շրջ. 20 դհ., Սուլիջ շրջ. 55 դհ., Գեղջուկ շրջ. 20 դհ., Զրվէժ շրջ. 27 դհ., Վրէժ Կովտէ 70 դհ., Բողոք շրջ. (օգոստոսի ամսավճար) 47 1/2 դհ., Կոուփ շրջ. 25 դհ., Սուր 20 դհ., Արշակունի 8 դհ., Երկաթ 54 դհ.:

Հոկտ. ի ամսավճարները: Զրվէժ շրջ. 27 դահեկան, Սուլիջ շրջ. 55 դհ., Ուշտունեաց շրջ. 35 դհ., Հանթ շրջ. 20 դհ., Կոուփ շրջ. 25 դհ.: Սյաք շրջ. 5 դհ., Բողոք շրջ. (սեպտ. և հոկտ. ամսավճար) 95 դհ., Վրէժ Կովտէ 50 դհ., Երկաթ 10 դհ., Արշակունի 8 դհ., Սուր 20 դհ.:

ՆԱԽԱՅԱՆԳԻՍՑԻ Կովտէն ստացած է.

Ծովանոց քղ. ից Աղբիւր շրջ. 3 ուռլի, Կայծակ շրջ. 20 կօպէկ, Մինասեանց 15 ղա., — Աւարայր քղ. ից՝ Գրիգոր 10 ղա., Խաչո 5 ղա., Դերենիկ 25 ղա., Գրիգոր 2 ղա., Աւետիս 5 ղա., Ա. Ե. 5 ղա., — Զրաշէնի Անահիտ մասնաճիւղի միջոցաւ Կարմիր քղ. ից՝ Մարթա 1 ղա., 20 կօպ., Սանդուխտ 1 ղա., 20 կօպ., Աղանի 1 ղա., 20 կօպ., Թէֆար 1 ղա., 20 կօպ.:

Կօկօյի ձեռքով՝ Սիմօն 10 ուռլի, Աբգար 5 ղա., Պղնձագործ 2 ղա., Նորայր 10 ղա., Ուլի 2 ղա., Խէչօ 1 ղա., Աւօ 3 ղա., Կոունի 2 ղա., Թօրոս 3 ղա., Արեղայ 3 ղա., 2ոդ 5 ղա., Զարար 10 ղա., Մկրտոչ 20 ղա., Աւետիս 5 ղա., Ա. Ե. 3 ղա., Նիզակ 100 ղա., — Սև-Զուրից՝ Բ. ոմն 5 ղա., Երկաթ 5 ղա., Ճանապարհորդ 3 ղա., Բարգարան 10 ղա.:

Հուր քղ. ի ամսականները (յուլիս 1 — օգոս. 31).

Տէր ողորմեա 15 ուռլի, Պարոյր 6 ղա., Զարեհ 9 ղա., Նոյ 6 ղա., Պ. Մ. 6 ղա., Տիրացու 3 ղա., Կարապետ 3 ղա., — Գիւղէն՝ Ն. Թ. 2 ղա., Ա. Ե. 1 ղա.:

Գաղթավայրից, Մեծ գիւղից՝ Առիւծ 2 ուռլի, Կարապետ 2 ղա., Գեորգ 2 ղա., Ծաղկաձորից՝ Խալքիս 25 ղա., Պ. Մ. Ա. 5 ղա.:

Նեղուց քղ. ի հանգանակութիւնից, Նոր Բերդի Ծըխաճան խմբից՝ Գ. Թ. 5 ուռլի, Ս. Ս. 10 ղա., Հ. Գ. 10 ղա., Ս. Գ. 5 ղա., Գ. Օ. 6 ղա., Յ. Գ. 10 ղա., Յ. Մ. 5 ղա., Ա. Ն. 5 ղա., Ստեփան Ս. 10 ղա., Տիգրան 10 ղա., Ճրագ 5 ղա., Զարգար 2 ղա., Մանուշ 1 ղա., Լուսիկ 1 ղա., Կարապետ 10 ղա., Պետրոս 15 ղա., Խաչիկ 25 ղա., Պօղոս 20 ղա., Սիրտ 15 ղա., Արև 10 ղա., Փոքր Պետո 5 ղա., Սաթենիկ 25 ղա., Վարդան 65 ղա., Արզուման 20 ղա.: № 1,946 Արաւշէս 50 ղա., Ճրագ Յուլ. 10 ղա., № 1,944 Ն. Ստեփանով 50 ղա., № 1,945 Ցորեն 100 ղա., Ծով 25 ղա., Աւետիս 5 ղա., Պաղտասարիկ 7 ղա.,

Գաղթական 90 ղա., Վասպուրական 30 կօպէկ, Զուր 10 ղա.:

ՈՍԿԵՅԱՆՔԻ Կովտէն ստացած է.

Արամայիս խ. 50 դահեկան, Զէյթուն և Շուշան 20-ական դհ., Սէր և Ծաղիկ 5-ական դհ.:

Հուր-Երկաթ ք. ի Բագրատունեաց խ. ից՝ Պայտ և Մահադէմ 20-ական դահեկան, Կայծակ, Ցոր., Վրիժաու, Թնդանթ 10-ական դհ., Ռումբ 7 դհ.:

ՔԵՐԴ քաղաքի Կովտէն ստացած է.

Հանթ խ. 19 1/2 դահեկան Գնդակ խ. 27 1/4 դհ., Օժանդակ խ. 78 դհ., Ծով գիւղի Վառօղ և Կապար խմբեր 134 դհ., Հայկաւան գիւղի Կայծակ խ. 35 դհ., Մնձուր աւանի ընթերցողներ 22 1/4 դհ.:

ՈՒՍՏՐԻ Կովտէն ստացած է.

Ինպաստ Հր. Ամերիկա խրկւած դաշնակցականներու:

Կ. Յ. 3 դօլար, Լ. Ս., Մ. Շ., Յ. Տ. և Տ. Ս. 2-ական դ., Ե. Օ., Ս. Ա., Մ. Պ., Յ. Տ. Յ., Յ. Ձ., Մ. Տ., Գ. Է., Մ. Ա., Կ. Ա., Կ. Փ., Ճ. Կ., Ա. Դ., Ա. Ն., Ս. Գ., Ա. Վ., Ս. Ն., Յ. Ճ., Գ. Տ., Մ. Յ., Գ. Հ., Գ. Մ., Յ. Ն., Ն. Ս., Հաճի Մ., Դ. Ս. և Թ. Եղբարք մէյմէկ դ., Պ. Կ. 75 սէնթ, Տ. Ճ., Հայ Ոմն, Հայ Ոմն, Հայ Ոմն, Կ. Թ., Մ. Փ., Ս. Կ., Յ. Մ., Պ. Գ., Հայ Ոմն, Կ. Փ., Յ. Ք., Ա. Ս., Թ. Յ. և Յ. Տ. 50-ական սէնթ, Յ. Պ. և Հայ Ոմն 25-ական սէնթ: Համագումար 47 դ. 25 սէնթ

ՆԻԻ. ԵՐԵՐԻ Կովտէն ստացած է.

Ինպաստ Հր. Ամերիկա խրկւած դաշնակցականներու:

Հրանտ և Հայրենասէր 50-ական դօլար, Եղբարք, Յ. Տիգրան և Եղբկ 25-ական դ., Գրիստոնեայ 20 դ., Ակօ և Տ. Վարժապետեան 15-ական դ., Կ. և Հայկ. Ընկ 15 դ., Նկարիչ և Փրկութիւն 10-ական դ., Բժ. Այվադեան, Արմենակ, Թօփրահան, Վիշտ, Յաւ, Սենան, Մաթիկ, Անկեղծ և Հիւրմուշ 5-ական դ., Պ. Չախ 3 դ., Զօրջ Բ. 2 1/2 դ., Զիբուխ, Սարաֆ, Պ. Բ., Քիթապչի, Վարդան, Օ. Գասպար և Թեքլեք 2-ական դ., Տիկին Ա., Ոմն, Ե. Տօպրաշ և Վարժապետի մէյմէկ դ., Գ. Ա. Գասպար 50 սէնթ, Ա. Սահակ 5 անգլ. ոսկի:

ՍՏԵՍՓՈՐԴԻ Կովտէն ստացած է.

Գինի 12 դօլար, Հիոտուկ 10 դ., 2. Եղբարք 10 դ., Վեհանձը բռնի առած խոստմնադրութէն 6 դ., Վեհանձէն 5 դ. 5 սէնթ, Վ. Պ., Խոսրով, Գ. Ա., Սուրեն, Փոքրիկ, Խնամի, Սև աղա, Գարեջուր 5-ական դ., Կ. Ա. Ն. և Կայծակ 3-ական դ., Հիւանդոտ, Հարաւաւաճար, Աշխատասէր 2-ական դ., Թ. Ծածկոց 1 դ.: Համագումար 96 դօլար 5 սէնթ:

— 0 —

Վրիպակ. — № 13-ի Ոսկեհանքի ցուցակին մէջ տպւած է Բարեսիրտ 10 օսմ. ոսկի, պէտք է ուղղել 5 օսմ. ոսկի Իսկ Շուշէճի 40 օսմ. ոսկի, չեղեալ նկատելը

Խմբագրութեանս գիմէլ հետեւեալ հասցեով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)